

հոլովում են. մեր մերոյ, մերք, մերոց եւ իմ, իմոյ, իմք, իմոց :

Այսպէս ուրեմն զբարարի ումն եւ իմն զերանուեններին զուզահեռ՝ Թիֆլիսի բարբառոն ունի ոք-մին եւ իք-մին: Առաջին զոյգը կազմուած է ո եւ ի զերանուեններին ո'-ման եւ ի'-ման ձեւով, որ յարաչեշտ լինելով՝ սղած են ա-երը, իսկ երկրորդ զոյգը նոյն զերանուենների յոգնակի ուղղահանից. ի- իք- իք-մին, ո- ոք- ոք-մին :

Զուզահեռ կազմութեան հետ՝ այս երկու զոյգն ունին եւ զուզահեռ նշանակութիւն, այսինքն՝ ինչ որ բան, ինչ որ մարդ :

Գրարարի ումն եւ իմն բառերի ծածուկ վանկերը -- մն -- մարդ կարող է փորձուել համարելու մին, որով կազմուած են Թիֆլիսի բարբառի օքմին եւ իքմին զերանուենները: Բայց այս բառերի մինքը պարզապէս նշանակում է մի, մէկ եւ ոքմին նշանակում է մի ոք, իսկ իքմին -- մի էք, մի դատ, մի բան: Ումն եւ իմն բառերի մն ծածուկ վանկերը իրենց ձայնաւորը սղած ման-եր են, որ իրենց լրութեամբ երեւում են յոգնակի ուղղականի եւ թեք հոլովների մէջ, դառնալով ոմանք, ոմանց: Գալով իմն բառին՝ նա՝ չունի յոգնակի թիւ եւ թեք հոլովներ, բայց բարդութեանց մէջ նա եւս հոլովներ, բայց բարդութեանց մէջ նա եւս երեւան է բերում իր սղած ա-ն. այսպէս մրջիմն, մրջման, մրջմանց, որ առաջ են դալիս մուրջիման, մուրջիմանց նախաձեւերից, սղելով շեշտից առաջ եղած ձայնաւորները -- մ(ու)րջ(ի)ման, մ(ու)րջ(ի)մանց: Համ. պարսկ. ۱۳۰ եւ իր նուագականը -- ۱۳۰:

Ն. ԱՂԱՆԻՍ



Յ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ճ Ո Ր Ո Ս Ի Ը Ի Ա Զ Ա Ն Ը

(Աշխարհագրական եւ պատմական նետազատութիւններ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Արեւելքում ամենամախնական շրջաններից սկսեալ ջրբաժան գիծն էր ցեղերի եւ տոհմերի կալուածները բաժանարար սահմանը: Մինչեւ օրս Օսմանեան իշխանութեան եւ Պարսկաստանի երկիրներում ջրբաժան գիծն է կազմում կալուածների սահմանները: Մի որեւէ առուի մէջ շրջապատից հոսած եւ այդ առուն թափուած բոլոր ջրերը նոյն սահմանի մէջ եղած բոլոր հողերի հետ մի ամբողջութիւն է կազմում: Արեւելքում ուսմիկ բարբառում քարացած է «ախար-բախարի» միտքը, դա անփոփոխելի եւ անայլալելի էր: Հետեւելով այս պատմական աւանդութեան, Ճորոխի Աւագանը մենք էլ բաժանելու ենք ջրբաժան դժով. ո՛չ թէ բռնակալ տիրող-յախիշտակողների քմահաճոյքով կամ սրի ճնշման տակ: Ճորոխի Աւագանը Հայոց աշխարհին մօտ միացած սահմանները աւելի նման է մեր երկրին եւ որքան խորն էք մտնում, թափանցում էք այս երկրի խորքերը եւ աւելի Սեւ ծովին մօտ՝ այնքան կերպարանափոխում է: Այրարատեան նահանգից, վանանդից-Բասենից Բարձր Հայք պտոյտ կատարելուց յետոյ, երբ ճանապարհորդը կարնոյ սաղից (ղաշտամբ) ուղղւում է դէպի հիւսիս-արեւելք, անցնում է Թուրքի, Թաֆթի, Կարագործէկի ամրոցները (Թարիա), Յրատ (Եփրատ) գետի հովտով Գումլու լեռների լանջերով, հասնում է Զինադորի հովիտը-Թորթումի գաւառում, այնպէս է փոխուում օղը, բոլորը, շրջապատի բուսականութիւնը, որ անցորդը զգում է կենցաղի փոփոխութիւնը: Ոչ միայն բուսականութիւնը, այլ նոյն իսկ կենդանիները իրենց գոյնով, հասակով, կայտառ շարժումներով նորանոր տեսարաններ են կազ-

մում անձանօթ աչքերին: Աւելի առաջ երթալով՝ Սողանլու-չոճի, Լեղենի անառոին փոխարինում են պողատու պարտէզների ծառերը. կեռասի, բալի, հոնի, նոխի, ընկոյզի, տանձի: Ամէն քայլափոխի պատահած աղբիւրները, առուները, ճահիճներն ու լճակները այնպիսի դմբուխի դալարով են գրաւում, հրապուրում ճանապարհորդի աչքերը, որ նա ոգեւորուած, յափշտակուած արտասովոր պատկերներով՝ ձգտում է անվերջ առաջ գնալ այդ առասպելական աշխարհը, վիթխարի ձորերը, սահելով, ցատկերտելով լեռների լանջերի կածաններով, առանց սոսկալու խոր անդունդներից եւ անհզագոչ առուակներից: Ծորոխի Աւաղանում այլ եւս չէք տեսնել ունչպարի եօթրձանի — եղ ու գոմէչ — գուլմանը. չէք լսել հոտաղի հորովելը. աջ ու ձախ մի-մի լծով չիռուորներ, կամ բահ ու փետատով ճանգրտում են լերան լանջերը, ապառաժի վրայ նստած երեք մաս հողը, որ ցանն իրենց կորեկը կամ սիմինդը: Աւելի խորը մանելուց յետոյ՝ այլ եւս չէք տեսնել սայլորդն իր բլրանման բարձած խոտով, որոնք քաշում են գոմչի լծկանները: Չկայ գաշտ, չկան ազատ հովիտներ, չկայ սայլի ճանապարհ, անվերջ անցնելու էք նեղ-նեղ կիրճերից ու ձորերից, ուր պարբերաբար ձեզ զիմաւորելու են էշի, ջորու, եզի եւ ձիու կարաւաններ, որոնք կորացած ծանր բեռի տակ՝ անվերջ տքալով բարձրանում են գէպի Բարձր Հայք: Երջապատն անտառ է կամ մացառ, էլ չէք տեսնի սեւ-սեւ հերկեր, ազարակներ. դալար է ամէն կողմ: Անվերջ անտառ ու շամբ է, ուր վխտում են կիթան ու վիթը, գայն ու արջը, վարազն ու կինճը եւ թռչունների երամակների երգն ու ճիչը օդն են թնդացնում: Թորթումին նման են Նարիմանն ու Պարզուղը, Փէնէկն ու Փէնէղկերաը, Թաուսբարն ու Կիսկիմը, Պալխարի ու Բալխի հովիտները, նոյնպէս Սպիրի երկար հովիտը եւ Բալխտուը:

Փխտնի ափերի ոսկեխառն աւաղը վէպերի եւ պոէմների առասպելական նիւթ է մատակարարել նախապատմական շրջանից սկսեալ: Ասորեստանի բռնակալ Սարգոնը ձգտել է Կիցիկային ու Խալխալին նուաճել անչուշտ սրանց ոսկու հանքերին տիրելու տենջանքով: Բալխիսը Ծորոխի Աւաղանի վրայ յարձակուել է Ամիսոնական գորքերով, նրա ոսկու հանքերը իւրացնելու

ձգտումով: Հելլադայից Արգոնաւի դիւցազներն Եկան Կողքիս, որպէս զի ոսկի գեղձը յափշտակեն: Մակեդոնացի Ալեքսանդրը պարսկական պատերազմի ընթացքում զօրք ու զօրավար էր ուղարկել, որ Փխտնի ոսկի հանքերը գրաւէ: Փխտնը նուաճել, տիրել ու շահագործել երազել են բոլոր Բաղդէական, Հաթիական, Եգիպտական, Ասորական, Պարսկական եւ Հռովմէական աշխարհակալները: Բայց ծորոխն ա՛յնպիսի անընկճելի դազան է, ա՛յնքան ըմբոստ, որ չեն կարողացել նորան կեմով բռնել, սանձել ու թամբել, ո՛չ կարողացել են այդ ապառաժներից ներս թափանցել, ո՛չ էլ ճանապարհ ու կամուրջներ շինել, որ կարողանան ընկճել եւ սարքկացնել:

Այսօր Ծորոխի ափերին նկատելի են հարիւրաւոր բովեր, որոնք մասնագետների կարծիքով 4000—5000 տարի շարունակ պեղուել եւ շահագործուել են. բայց չնորհիւ Եւրոպական մեքենավար հալոցների արտակարգ զարգացման, ԺԹրդ դարում անդործութեան դատապարտուեցան չուրջ հարիւր տարի: Չմշակուեցան ո՛չ միայն մետաղի՝ սղնձի, սկուռ, արծաթի, երկաթի, արճեճի, այլ նոյն իսկ ծծումբի, քարածխի, սաթի, մարմարքարի, ներկերի եւ աղի հանքերը:

Այսօր, Ծորոխի Աւաղանի ամէն կողմն անխափր քայքայուած է եւ անտեսապէս սնանկացած: Չքայցել են այդուպաններն ու արդիւնագործները, հեռացել են արհեստաւորներն ամբողջապէս, երկրագործը օրապահիկը նուազագոյն չափով հաղիւ է ձեռք բերում. աւանդական ձգտումը մեռել է յուսախարութիւնից: Այդինքնում գինի, օղի պատրաստող չկայ, պահանջ էլ չկայ. չեն պատրաստում չոր միրգ, անտառների արտադրութիւնները կանգ են առել, չուկայ չկայ ծախելու: Այն վտեմ եւ ինքնափստահ հողին, տոկուն եւ ունակ կարողութիւնը, որ հնումը արտայայտել էին Տայեցի-Ներսէսի նման շինարարներով, Գիւտի նման վարիչներով, Մամիկոնեանների նման սպարապետներով, Բագրատունիների նման Կորիմներով, Պահլաւունիների նման քաղաքազէտներով, Անգեղների նման անվահեր սագմիկներով, Ամատունի, Արծրունի, Գնթունի, Գնունի, Մալխաղ, Մանաւաղ, Կամսարական, Որդունի, Սիւնի նախա-



Զիարէք լճակը: Այս լճակի ափերում նկատել են 25-30ի չափ վիշապային որձաքարէ գինանածե արձաններ, որոնք մի ժամանակ ուղղահայեաց կանգնած են եղել լճակի ափերում, ջրերի մէջ եւ որոնք այսօր թաւարուած են գետին: Այս արձանները 5-7 մետր բարձրութիւն, 0.80-1 մետր տրամագծի թանձրութիւն ունին, տաշուած, ողորկուած եւ յղկուած են, որոնց վրայ քանդակուած են օձի, մողէսի, եղի, գոմէշի եւ ուրիշ կենդանիների պատկերներ, գլուխներ այլ եւ այլ ձեւերով: Զիարէք բառը թուով է հնումը՝ Ակկատ-Սումերական տաճարներում գործածուած Զուխուրաք բառի այլակերպումն է լինելու. ինչպէս Ճորոխի Աւագանի՝ նոյնպէս ամբողջ Նահարինի (գետերի աշխարհի) ամէն մի առուակի սկզբնական աղուներն տրուած է եւ ջրի Բըղլման - Յայտնութեան արտայայտութեան տեղ: Զիարէթ լճակի այս արձաններից ոչ շատ հեռու, 5-6 կիլոմետր, գտնուում է Սրբահան առուակի աղուները, իր ճահիճներով եւ վիշապական արձաններով, որը յիշեցնում է Ակկատ-Սումերեան Էա-ձուկ գիւղն՝ Օանէս ծովազնացին: Թէեւ քրիստոնեայ աշխարհը այս դերերը փոխադրել է Ս. Յովհաննէս Մկրտչին եւ Սրբահան անունով կնքել է գեղը, ամառանոցը, ճահիճները, առուակը եւ յատուկ վանքը (աւերակ): Սակայն որձաքարեայ վիթխարի արձաններն ասում են, որ նրանք Յովհաննէս Մկրտչից 3000-4000 տարի առաջ են յղկուած, քանդակուած եւ յիշեցնում են Մեծամօրը, Մեծմօրը կամ Մօրմեծին՝ վիշապազանց ջրերի մայր գիցուհուն՝ Անահիտին: Այս պարագան աւելի հաստատում են Սպերի եւ Բիդէի մէջ տեղ գտնուած զոյգ լճակները Յովտակ (Այլըր) եւ Պալակցիս, իրենց համանման որձաքարեայ վիշապական արձաններով «Քառասունը անմահից» օթեւան (Քրքլար) լեռներից, եւ որոնցից սկիզբն է առնում Օրձոր առուակը եւ գալիս խառնուում է Ճորոխին:

1885ին Արագածի գագաթին, Կաղնէֆէր լճակի ափին առաջին անգամ նկատեցի Զիարէթի եւ Սրբահանի որձաքարէ արձանաւելի էին, կասկածում էի, թէ արդեօք իրաների երկու խոշոր համանմանները ճահիճներում գլորուած: Այնքան մեծ էին, որ անհար էր շարժել եւ քանդակներն աննկարելի էին, կասկածում էի, թէ արդեօք իրա-

պէս վիշապական արձան են թէ ոչ: Վերջին խժոժութիւնների ժամանակ գեղացիները այդ արձանները գլորել են բարձունքից եւ մէկի գլխից 2 մետրաչափ կտարել են, որ տանին հօր գերեզմանը դարգարեն: 15 լուծեղներ այդ կտորը չեն կարողացել քաշ տալ: Զուհուրաթի, Սրբահանի եւ Արագածի վիշապ արձաններն այնքան ինձ հետաքրքրեցին, որ 1906ին դնացի Գեղարդ, բարձրացայ Գառնիի (Ազատառուակի) բարձունքը, Սեւանի լճի հարաւային լեռնաշղթայի լանջերում գտայ ճահիճների եւ աւաղուտների մէջ գլորուած 30ից աւելի վիշապական արձաններ, աւելի ճոխ, գեղեցիկ քանդակներով, որով արդէն համոզուեցի, որ սրանք վիշապազանց շրջանից մնացած յիշատակարաններ են, որոնք երկրագործ դասի պաշտամունքն էին կազմում, որտեղից սկսում էին դաշտերն ու հովիտները սոսոզող առուակներն ու ջրանցքները: Այս արձանների վրայ գտնուած սլաքները այնքան համանման էին Գեղարդի ապոտոթային վանքի վրայ գտնուած սլաքներին, որ տարակոյս չկայ, թէ սրանք ինչ որ կապ են ունեցել հեթանոսական դարաշրջանում:

Բաշգառնից, Գեղարդից անցնելով՝ երբ Բայբուրդի հայլան տեսայ, խկոյն յիշեցի Ճորոխի Բայբուրդը, զգացի թէ անշուշտ կապ կայ սրանց մէջ: Այստեղից տեսնելի է Իմիրչէիլը եւ Կալաչին, որի անունը ինձ ձանօթ էր Արագածի լանջին գտնուած Կալաչի եւ Հոռոմի բերդի Կալաչի անուններից որով պարզուեց, որ Կալաչին էլ այդ հին յիշատակարաններից մէկն է: Արիաչէն<sup>1</sup> (Արքայաչէն) լեռների ստորոտում Արիմիշա, Արիսիշան, Սոսրվաչ եւ Մանկուք աւերակները, Կարա լիճը եւ սրանց մօտ գտնուած վիշապական արձանները լիովին բացատրեցին Զիարէթի, Սրբահանի եւ Օրձոր առուակի աղուները՝ Յովտակ լճակի արձանների գաղտնիքը: Այս ջրերը կազմում են Վեղի-բասարի առուակի աղուները, որոնք Գառնիի նման սոսոզում են Արարատեան դաշտի Արաքսի ձախ ափին կից մասերը:

Սեւանի լիճը թափուող Մարքենոց վտակը, որ դուրս է գալիս Ժիլի եւ Ալլահ լճակներից, որոնք գտնուում են Դիք-Փիլա-

<sup>1</sup> Արիաչէն, Ախաչէն, Արբունիս, Արկիս գեղանուններ շատ կան Ճորոխի Աւագանում, երեւի բոլորն էլ վիշապազանց շրջանի շէներ են:

քան եւ Դիւք-չինիլի լեռների ստորոտում, ուր դանոււմ է Կըզըլ վանքի աւերակները, նոյնպէս ջրանցքի ախն ու աղբիւրն է եւ համանման պաշտամունքի առարկայ մինչեւ այսօր: Չանախչի առուակի աղունքի Սըբահան (Յով. Մկրտիչ) վանքը, նոյնպէս յիշեցնում են Սանաարի երկրի Օանէսին: Արփա-արեւելեան առուակի աղունքը՝ Շարուր-Դար-Ալաղեաղի (Վայոց ձոր) բարբոսը-Դար-Ալաղեաղի (Վայոց ձոր) բարբոսը նոյնքան հետաքրքիր է վիշապազանց պաշտամունքով, որքան հետաքրքիր են Գառնիի, Վեդիի, Արաղածի եւ Թորղումի լճակները եւ առուակների աղունքը: Դիւք-Փիլաքան լեռներից հարաւ Գիւզալ-Դարա լեռներից բղխում է Արփաչայն արեւելեան, լեռներից բղխում է Շահ-բուլախ (աղորի աղունքը կոչւում է Շահ-բուլախ (աղորի)․ այս առուակի սկզբնական ձորերը կոչւում են Վարդերեսի դաշտեր եւ հովիտներ (Գիւլ-իւզ-ղիւզ): Այստեղ գտնոււմ է Գնդա, Գօլա, Գիւնէյա, Շահի եւ ուրիշ բազմաթիւ աւերակ եւ կիսաւեր վանքեր, որոնք կարծես հաստատուել են Արփա առուակի եւ նորա հետ զուգընթաց գնացող ջրանցքներին հսկելու: Բայց ամէնից հետաքրքրականն է Մարիամ-Աստուածածին վանքը, որ կանգնած է Թէքէ-Տուրքուրան լեռան ստորոտում եւ հսկում է միւս վանքերին: Դարալաղեաղի (Վայոց ձորի) տաճարներին եւ վանքերին թիւ չկայ, բոլորն էլ աւերակ եւ կիսաւեր. բայց նկատելի է, որ հին ճոխութեան փշրանքը անշնչելի է եւ ամէն տեղ էլ Վիշապազանց-Մեծամօր յիշատակները նկատելի են: Այդպէս շարունակելով Նախշեւան, Ալինջա, Գիլիան, Դիրնիս եւ Աղուլիս առուակների աղունքը, ամէն տեղ նկատելի են երկրաւոր աղահաղարաւոր առուակները եւ բերաւոր աղբիւրների անշնչելի հետքերը: Այս կենսատուրերի արեւաբաշխին Սեւանի լճի շրջապաշտում ապրող հողագործը, մանաւանդ Գողտում երկրիչները երբեք չեն կարողացել մոռալ նալ եւ մեր պատմաբանի՝ Մ. Խորենացու օրով այնքան հետաքրքրական են եղել, որ Դաւիթ Բաղրատունին պատմաբանից բացատրութիւն է պահանջում այս վիշապազանց մասին եւ նա մոլորած, վիշապազանց համեմատում է Ափղահակի հետ, այդ ջրերի երկրպագու ժողովրդին Մարերի (օձ) հետ, Մար ազգը թարգմանում է «օձ» բառով, Արարատեան դաշտի հիւսիսում ապրող բնակչութիւնը Մարաստանից Տիգրանուհի թագուհու հետ

բերած սարուկների դաս է շինում . . . : «Չանայտ Մրս վիշապանց, որք են յագանի վերի Մասիս» . . . , եւ Մասիս լանջերի ջրանցքների շուրջը ապրող ժողովուրդն էլ սրանց հետ «Վիշապազուն» եւ «Մար» անուններով՝ վերջացնում է իր բացատրութիւնը:

Այսպէս անբացատրելի էին մնացել . . . «անդուստ գլիշապանցն ծընունդ . . . , եւ իբր տրփանք Սաթինկան ընդ վիշապազունսն . . . առասպելաբար, այսինքն ընդ դարմս Ափղահակայ . . . » Խոր. Գիրք Ա. 1. Գիրք Գ. ԽԹ եւ ԿԱ: Շարուր, Վայոց-ձոր, Խորշակունիս, Խրամ, Զուղա եւ Նախշեւան ու շրջակայքը, ուր բանաստեղծները «թուրեաց երգերը» կարդում եւ նուագում էին, անջատում է բնիկներից եւ Մար է դարձնում. Թէ ի՞նչ է, չբացատրէ թէ Ե. Զ. դարերումն էլ Մեծամօր երկրպագուները չեն բաժանոււմ երգից, նուագից, դիմուց, տափանքից եւ նուրբ՝ ճաշակաւոր արգ ու զարդից:

Այս վիշապազանց արձանների նկատուած շրջանում, Լենինական նահանգի Ղուլիճան գեղում, մի դեղացի պեղում է Արեւապաշտական մի գերեզման 1909ին եւ գտնում է կարասի մէջ մի չորացած կմախք: Յայտնի բան է բիրտ գեղացին կարասը ջարդել էր, ոսկորները խորել էր. իսկ կարասից դուրս բերած բրոնզեայ դօտին, կէս մետրանոց երկաթէ նեղ ու կոր դաշոյնը պահել էր, որը ճարտարապետ Թորոմանը գնաց, գնաց եւ բերեց Լենինական. դաշոյնը եւ այդ դօտին երկար ժամանակ մնաց Լենինականում-Յակովբ Կարանեանի պահեստում, որտեղից վերցրել եւ նկարիչ Ռաֆայէլեանին ծրագրեցի, որ վերակազմէ այդ դօտին: Գօտին եւ վերակազմութիւնը ներկայիս Հայաստանի (Երեւանի) թանգարանումն է:

Գօտին կազմուած է բրոնզից, երկայնութիւնը 75 սանտիմետր է, լայնութիւնը 20 սանտիմետր: Երկու ծայրերը համանման վիշապներով զարդարուած են եւ շարունակոււմ է վիշապների երկշարքը ամբողջ երկարութեամբ: Նկարն ունի կենդանի, որից վիշապները դէպի ծայրերն են ուղղուած: Գօտին դեղին, փափուկ բրոնզից է շինուած, ինչպէս նկատելի է սկզբում ամբացրած է եղել կաշու վրայ,

որի ծայրերը կապել են ճարմանդով: Քանզակները շատ նախնական են, ինչ որ մի կարծր ծայրով եւ թակով համանման փոսիկներ է խիւած եւ այդ փոսիկներից կազմուած են վիշապների նկարները: Նկարները համաչափ են երկու կողմերում եւ համաչափութիւնը ամէն տեղ պահպանուած է: Դազազ-կարասի մէջ ինչ որ խոնաւութիւն է առաջացել եւ տեղ-տեղ դօտին փտել էր: Այդ կտորները (11 հատ) իրար քով շարելով՝ վերակազմութեան ուրուազիւծը տուի նըկարչին:

Նոյնանման մի դօտի դանուած էր Ուրմիա լճի հարաւ-արեւելեան կողմը, երկու եզի բրոնզի արձանների հետ, դուշշի գեղում (Տես Ազգազրական Հանդէս 1913, Ա. գիրք, էջ 121. Ատրպետ, Եզի պաշտամունքը): Դուրիջանում գնուած դօտին մասամբ նման լինելով Դուշշիի դօտուն, ես դազափար կազմեցի թէ դա անպատճառ վիշապազանց որեւէ մոզի կամ քուրմի դօտի է: Ենթադրութիւնս աւելի ուժեղացաւ, երբ քննեցի եւ նկատեցի, որ Դուրիջանի մօտից անցնում է Արազածից իջած եւ Ապարանով դէպի Աշտարակ ուղղուած ջրանցքը, որի պաշտօնեան կամ ջրաբաշիը՝ ջրպետը երեւի եզել է այդ քրմապետը, որ բնակավայր ունեցել է Դուրիջանում: Դուրիջանի մօտ ապառաժի վրայ քանդակուած սեպածեւ արձանագրութիւնը ցոյց է տալիս, ինչպէս բացատրում է Նիկոլային, որ այդ քաղաք-բերդը դոյութիւն է ունեցել ուրարտական իշխանութեան շրջանում:

Այս պարագաներից համոզուած, ես ենթադրում եմ, որ Փաշա-փազի, Արբահանի, Յովտակ լճակի, Արազածի եւ միւս արձանները վիշապազանց պաշտամունքի՝ ջրապաշտութեան շրջանից մնացորդներ են, որոնք ապացուցանում են, որ ձորոխի Աւագանում կրակապաշտութիւնից, մոխրապաշտութիւնից շատ դարեր առաջ հաստատուած էր վիշապազանց պաշտամունքը. Մեծամօր անրիծ, անարատ ջրերի — Անահիտի գերագոյն իշխանութեան շրջանը, Միհր-Արեւ Աստուծոյ եւ Արամազդի հետ: Հետագայ դարերում նոյն իսկ ուրարտական շրջանից յետոյ պիտի մտած լինի կրակապաշտութիւնը-մոխրապաշտութիւնը:

Մոխրապաշտութեան մուտքից շատ հին է բնապաշտութիւնը եւ վիշապազանց

ջրապաշտութիւնը, քանի որ ամենահին յիշատակարանները՝ ջրանցքների նախնական շինութիւնները կազմուած են Աշքադարեան (Թեփէ-գեօղ) վիթխարի եւ կարծր քարերով, որոնք մոխրապաշտութիւնից շատ դարեր առաջ են դոյութիւն ունեցել: Էյրամից — Սինասար դաշտը իջնող Քարուն (Ուլայ) դետի ճախակողմեան-հարաւային մի մեծ վտակը, հնումը ակկատ-սուձերների շրջանում կոչուել է ձերրոխ (Տես Հելմոլթ, Մարդու Պատմութիւնը, հատ. Գ. էջ 8 եւ քարտէզը): Այս ձերրոխ անունը արգեօք կապ չունի՞ մեր ձորոխի հետ: Այս անուններն այնքան ուշք չէին դրուել, եթէ էլամի նախնական թագաւորներն էլ Բագադատ, Բագակերտ, Բագատուր (տուր սուձերական լեզուով = որդի) անունները չկրէին եւ ձորոխի Աւագանի մէջ եղած Բագա, Բագինա, Բագատ, Բագիր եւ այստեղից էլ Բագրեւանդ Արշարունիք եւ Շիրակ տարածուած Բագարան, Բագնայր, Բագրեւանդ եւ այլն անունների կրկնումները ուշք չըդրուէին: Այս անունները ջրային պաշտաման եւ Անահիտի անձին նուիրուած պաշտամունքներն ու տաճարները ստիպում են ենթադրելու, որ ձորոխի Աւագանի նախնական կրօնը վիշապազանց պաշտամունքն է:

ձորոխի Աւագանի մի քանի գեղերի անունները, նրանց նախապատմական եւ պատմական շէնքերը, բարձր ժայտերի մէջ ունեցած անձանները եւ այդ անունների կրկնութիւնները եւ համանմանութիւնները Հաթթական աշխարհի, Սենասարի դաշտի, ակկագեան քաղաքների անուններ են. որ սրանք հետազօտողին ստիպում են ակամայ քննելու այդ բոլորը եւ լուրջ ուշադրութիւն դարձնելու դրանց վրայ:

1. Արերդա ակկատ. անունին այնքան նման է Թորդումի Արերնեսի աւանը եւ Արերնեսի դրունքը. Բայախոռի Արարանից եւ Շաւէթի Բերդա գեղերի անունները, սրանց աւերակները եւ դիրքը, որ թուում է թէ միաժամանակ դոյութիւն են ունեցել սրանք իրար հետ:
2. Կիսկիմի եւ Թորգումի Անինքը Դուրիլուի Անուի հետ կարելի է համեմատել:
3. Ակկագ քաղաքի անունը կարելի է հակադրել Ակրիա, Ակուցա, Ակերնից, Ակուս գեղերի անունները եւ աւերակները:
4. Բարելուին-Բար, Բարիկ, Բարերդոն գեղերի աւերակները:
5. Բագդատին կարելի է համեմատել Բագդատ,

Բագա, Բագինա, Բագիրբունդար եւ ուրիշները: 6. Բասկա քաղաքին—Պալիսարի Բաշկայի աւերակները: 7. Բարրա քաղաքին — Բարա, Բերթի, Բարալիաք աւերակները: 8. Բեկա քաղաքի — բազմաթիւ Բեւլաջրերը, Բեւլաջրերը: 9. Երեցու քաղաքի անունը համեմատել Երզովոտ, Երախանի, Երիզա, Էրամէա աւերակներէ հետ: 10. Թեւլլօ անունը համեմատել Թեւլաո, Թեւրսիսի աւերակներէ հետ: 11. Լազաջը՝ Թեւրսիսի աւերակներէ հետ: 12. Լարան — Լարապի եւ Լազարէի հետ: 13. Ուալիսալ Անշանի աստանը՝ Խալիսալի հետ: 14. Նանան՝ Նեկրայի հետ: 15. Շուշը Էլամի՝ Շուշա եւ Շուշաներ Ութիի աւերակներէ հետ: 16. Ակպասներ Ումման՝ Արզվինի Ումանայի հետ: 17. Ունուն՝ Ազղանուշի Ունուսիսի հետ: 18. Ուր քաղաքը՝ Ճորոխի Աւազանի Ուր, Ուրբա, Ուրբամաի, Ուրծումա, Ուրբա, Ուրծ, Ուրեճի եւ այլն հետ: 19. Ուրուէր՝ Ուրեկի, Ուրեխի, Ուրու-Կախանի աւերակներէ հետ: 20. Ուրզուր հաթթական քաղաքը՝ Ուրգուր, Ուրգուլա, Ուրգանդից աւերակներէ հետ: 21. Սերպուլան՝ — աւերակներէ հետ: 22. Սիպ-Շիրարնէի, Չիրվուլիի հետ: 23. Սիպ-Շիրարնէի, Շուբանի, Շուբլիճէի պարը՝ — Սպերի, Շուբանի, Կուզբաշէն, հետ: 23. Քութին՝ — Կութի, Կուզբաշէն, Կուզաուր աւերակներէ հետ: 24. Քուֆան՝ — Կուֆա, Կուֆա, Կուֆի աւերակներէ հետ եւն եւն:

Այս պատմական քաղաքների եւ աւանների անունները, որոնք յաճախ կրկնուած են ինչպէս Հայաստանում, Կովկասում, նոյնպէս եւ Ճորոխի Աւազանում, ստիպում են ենթադրելու, որ սրանք ո՛չ միայն իրար հետ կապ են ունեցել, այլ իրարից են փոխ վերցրել քաղաքակրթութիւնը դարէդար հետեւաբար սերտ յարաբերութիւն են ունեցել, իրարից ընդօրինակել ո՛չ միայն դիւր ու գիցուհիք, այլ ամէն մի գիւտ եղել է ընդհանրական եւ իրարից օգտուած:

Եթէ 4000—5000 տարի անցած պահանուած է Սալիսալի, Փիտունջուրի, Սպեպարի, Բագդատի, Անահիսի, Վարդավառների ու Վարդեհէրների անունները. ի՞նչի չհաստատալ, որ այս գեղերի անուններն էլ անազարտ պահպանել են իրենց գարեւոր աւանների, բերդերի, ոստանների անունները եւ մեզ են հասցրել: Մանաւանդ Թորդուսի, Ութիի, Կլարջի սոյն գեղերի մօտ լեռների

մէջ գտնուած եւ փորուած անձաները ստիպում են համոզուելու, որ դրանք նախապատմական դարերում են պեղուել, զարգացել եւ պահպանել են իրենց գոյութիւնը:

Ճորոխի Աւազանի շուրջ 3000 գեղերի, վտակների, առուակների, լեռների, ձորերի յատուկ անունները ըննողը պիտի համոզուի, որ դրանք կրկնութիւններ են եւ 16 վտակների ամերի դաւաններում էլ դրեթէ համանուն են չէներն ու լեռները: Թէեւ Իմերեթեի, Դեւիսի, Մաճիխի, եւ Աջաբայի վտակների ամերին հիմնուած չեների, լեռների անուններից շատերը վերական չէ, ուլի, Մղալի, ձիւրի, ցիւխէ, խեւի ամանցներով են, բայց անունների արմատական մասը այնքան համանուն են, որ կասկած չկայ, թէ ամբողջ 16 վտակների էլ աւազաններում համանուն ժողովուրդ է ապրել. միաժամանակ աստիճանաբար զարգացել, քաղաքակրթուել եւ համանուն զարգացում են ունեցել, թէ պաշտամունքի եւ թէ արհեստների զարգացման ընթացքով:

Օտմանեան 400 տարուան դերիշխանութիւնը ո՛չ մի քաղաքակրթական ազդեցութիւն չի թողել Ճորոխի Աւազանի վրայ, դրանց ձեռքով միմիայն կործանուել են հին քաղաքակրթական ձեռակերտները, այն ինչ ընդի ժողովուրդն ինքն է ներդրել այդ կառավարութեան վրայ: 3000 յատուկ անունների մէջ մի-երկու տոկոսից աւելին չեն դրուել թրքական անունները, այն էլ մեծ մասամբ ծովի ամերին եւ կայրել են վերջին դարերում: Թէեւ հին անուններից շատերը ազաւազուել են, բայց զննող աչքերը եւ սուր ականջները ընդի — նոյն իսկ Իսլամացածների բերանից կարող է լսել իսկական անունները:

Հնինական: ՆՏՐՊԵՏ  
(Շարունակելի:)

